

1993

213

84-3

9-75

84-3

2-75

2/2

ԷՄԻԼ ԶՕԼԵ

№ 75

1/8

ԵՐԿՈՒ ՄԱՀ



20 03

ԹԻՓԼԻՍ

84-3


2-75

ԷՄԻՆ ԶՈՒՆ

սյ

# ԵՐԿՈՒ ՄԱՀ

1001  
1464 2



2011

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Յպ. Կ. Մարտիրոսյանցի. | Тип. К. Мартиросянца.  
Орбедіановская ул., д. № 1/2.  
1899.

464

1899 1899

ՅԱՍ ՄԱՅ

Доволено цензурою. Тифлисъ, 15 Юня 1899 года.



# ԵՐԿՈՒ ՄԱՀ



I.

իկին փրարը այրիացաւ սրանից ութ ամիս առաջ. նորա ամուսինը դատաւոր էր: Արին պատկանում է բարձր բուրժուազիային և երկու միլլիօն կարողութեան տէր է, ունի երեք որդի, որոնցից իւրաքանչիւրը ժառանգել է հօրից հինգ հարիւր հազարական ֆրանկ: Խստապահ, հպարտ և գոռոզ ընտանիքի այս երիտասարդ ժառանգները հրաշքով էր ինչ էր, կեանքի մէջ դուրս եկան անբաղոյ, կասկածելի հակումներով ու ճաշակներով:

Երեքն էլ մի քանի տարում վատնեցին իրենց գոյքը: Մեծը՝ Չարլը, որ շատ եռանդուն մեքենագործ էր, բոլոր ունեցածը ծախսեց զանազան փորձերի վրայ: Միջնակը՝ Թորփը բոլորը վատնեց կանանց

Ս Դ Ե Կ Ը Թ  
 Երկրային Տնտեսական Գիտությունների Կոնգրեսի  
 Կենտրոնական Կոմիտեի Կողմից  
 1899

վրայ: Կրտսերին՝ Մորիսին քանդեց իւր ընկերը, որի հետ միասին ուզում էր թատրոն կառուցանել:

Այժմ երեքն էլ ընկել են մօր վզին, որ նրանց պահում և կերակրում է, միայն թող չէ տալիս, որ խառնուրդ իւր գործերում և ամեն ինչ փականքի տակ է դնում: Այս ամբողջ գերդաստանը ապրում է Փարէում Տիւրին փողոցի վրայ: Տիկին ժիրարը 68 տարեկան է: Նա ունէր մի քանի թուլութիւններ, որոնք նրա պառաւութեան հետեանքն էին. օրինակ նա պահանջում է իւր տանը վանական հանգարտութիւն և կարգապահութիւն. նա շատ ժլատ է, հաշուում է շաքարի կտորները, զինու կիսատ շշերը իւր ձեռքով է փակում պահարանում: Ինքն էր տալիս որքան պէտք էր, թէ ամանեղէն և թէ սպիտակեղէն: Ինչ ասել կուզէ, որ որդիքը նրան սիրում են և մինչև անգամ անպայման լսում են ամեն բանում, չնայելով որ արդէն հասուն մարդիկ էին:

Բայց երբ պառաւը մենակ էր մնում որդոց հետ, իրեն վատ էր զգում. նա հոգի էր տալիս չը լինի թէ իրանից փող ուզեն: Ուստի այրին իւր դրամադրուելը անշարժ կայքի վերածեց: Նա ունի Պարիզում երեք տուն և կալուածներ Վենսենում: Այդ թէև շատ հոգս էր պատճառում, բայց պառաւը հանգիստ էր, որ կարող է մի բան հնարել և մերժել տղաներին փող խնդրած դէպքում:

Բայց և այնպէս Չարլը, Փորժը և Մորիսը կողպտում են տունը և տանում են ինչ որ կարող են:

Նոքա կուռում են, խլում են միմեանցից իրերը և միմեանց երեսով տալիս իրենց փող վատելը: Նոքա լաւ գիտեն, որ մօր մահից յետոյ դարձեալ պէտք է հարստանան և միթէ այդ չէ պատճառը, որ նոքա ձեռքերը ծալած նստած սպասում են: Ճիշտ է, նոքա այդ մասին բնաւ ոչինչ չեն խօսում, բայց շարունակ մտածում են ապագայ բաժանման մասին: Եթէ նոքա մի կերպ չհաշտուին, այն ժամանակ պէտք է բոլորը ծախել, իսկ այդ շատ էլ ձեռնտու չէ: Նոցա բանն ու գործը գոյքի այդ ապագայ բաժանումն էր, թէև առանց մի որ և է յետին միտումների, այլ միայն նորա համար, որ հարկաւոր է սկզբից նախատեսել: Նոքա բարի, ուրախ և ազնուասիրտ մարդիկ են և բոլորովին չեն ցանկանում մօր մահը: Մայրը արգելք չէր լինում նոցա ծրագրներին:

Նոքա միայն սպասում էին և ուրիշ ոչինչ:

Մի գեղեցիկ երեկոյ տիկին ժիրարը դուրս գալով ճաշից յետոյ, իրեն վատ զգաց: Որդիքը խորհուրդ են տալիս նրան պառկելու, իրենք են տանում իւր սենեակը, սիրով նայում հիւանդին և երբ պառաւը կարողանում է հաւատացնել նոցա, թէ լաւ է և դա մի հասարակ գլխացաւ էր, այն ժամանակ միայն յանձնում են նրան ազախնի խնամքին: Բայց առաւօտը պառաւի դրութիւնն արելի վատացաւ և տնային բժիշկը անհանգստանալով հիւանդի մասին յայտնում է, որ նրա դրութիւնը վտանգաւոր է և

բժշկական համախորհուրդ պահանջում: Ահա ամբողջ շաբաթ է, որ հիւանդի անկողնի մօտ տեղի է ունենում մի կատարեալ դրամա: Տեսնելով, որ դատապարտուած է անկողնում պառկելու, հիւանդի առաջին հոգսն եղաւ, բերել տալ բոլոր բանալիները և բարձի տակ թագցնել: Նա մինչև անգամ անկողնումն էլ ցանկանում է լիազօր տիրուհի լինել և պահպանել տունը կողոպուտից ու կործանումից: Այլրի կնոջ սրտում առաջ է գալիս խուլ կուլու. սարսափն ու կասկածը հալ ու մաշ են անում նրան: Աչքը յառած անվստահ դիտում է մայրը որդոց ամեն մի քայլը, կարծես ուսումնասիրում է նոցա կամ վերեւից ներշնչման սպասում, որպէս զի վճռ է, թէ երեքից որին կարելի է հաւատ ընծայել: Վերջապէս կարծես վճիռն ընդունուած է, նա կանչում է իւր մօտ ժորժին և շշնչում է ականջին:

— Ահա քեզ պահարանի բանալին, շաքար բեր, բայց տես կրկին փակիր և բանալին բեր տուր ինձ: Բայց միւս օրը նա այլ ևս հաւատ չէ ընծայում ժորժին և այնպիսի կասկածելի հայեացքով դիտում որդու իւրաքանչիւր քայլը, որ կարծես վախենում է՝ չը լինի թէ նա վառարանի վրայից որևէ բան թոցնէ: Նա կանչում է ձարլին, տալիս բանալին և շշնչում է. «Աղախնին հետոյ տար, նրան ասա, որ վերցնի սաւանը»: Հիւանդի քաշած բոլոր ֆիզիքական տանջանքները՝ ոչինչ են, համեմատած այն սարսափելի բարոյական չարչարանքների հետ,

որ նա անկարող է այլ ևս կառավարել տնային գործերը: Պառաւն ակամայ յիշում է իւր որդոց ծուլութիւնը, ազահուլթիւնը, յիմարութիւնը և փող վատնելը: Նա արդէն վաղուց է, որ այլ ևս չէ յարգում իւր զաւակներին, որոնցից ոչ մէկը չիրականացրեց նորա յոյսերը և որոնք միշտ նրան տանջում էին իրենց շռայլութեամբ: Միայն մայրական սէրն է, որ ամեն ինչ ներում է: Նորա խղճալի և աղերսալի հայեացքը, կարծես խնդրում է նոցա, որ խնայեն իրեն և թողնեն հանգիստ մեռնել, չտեսնել, թէ ինչպէս նոքա կսկսեն միմեանց ձեռքից յափշտակել և բաժանել նորա գոյքը. այսպիսի բաժանումն, նրա աչքի առաջ, նրա մահամերձ ազահութեան համար անտանելի տանջանք կը լինէր: Բայց և այնպէս ձարլը, ժորժը և Մորիսը շատ բարի և ուշադիր են դէպի իրենց մայրը: Նոքա միմեանց խօսք են տուել հերթով խնամել հիւանդին: Նոքա հոգատար են շատ մանրակրկիտ բաներում անգամ և բոլոր հոգսերն ապացոյց են իրենց միայն դէպի մօրը տածած սիրոյ:

Բայց և այնպէս նոքա գալիս են հիւանդի սենեակը, անհոգ դէմքով, ծխախոտները բերանին, «ասէկօսէների» պաշարով. այդ բոլորը պառաւի ինքնասիրութիւնը չարաչար վիրաւորում էր, մտածել տալով, որ նա ոչ մի արժէք չունի որդոց աչքում, մինչև անգամ իւր վերջին րոպէներում: Պառաւի ուժերը քանի ջլատուում էին, այնքան նրա ան-

բժշկական համախորհուրդ պահանջում: Ահա ամբողջ շաբաթ է, որ հիւանդի անկողնի մօտ տեղի է ունենում մի կատարեալ դրամա: Տեսնելով, որ դատապարտուած է անկողնում պառկելու, հիւանդի առաջին հոգսն եղաւ, բերել տալ բոլոր բանալիները և բարձի տակ թագցնել: Նա մինչև անգամ անկողնումն էլ ցանկանում է լիազօր տիրուհի լինել և պահպանել տունը կողոպուտից ու կործանումից: Այրի կնոջ սրտում առաջ է գալիս խուլ կոխ. սարսափն ու կասկածը հալ ու մաշ են անում նրան: Աչքը յառած անվստահ դիտում է մայրը որդոց ամեն մի քայլը, կարծես ուսումնասիրում է նոցա կամ վերեւից ներշնչման սպասում, որպէս զի վճռ է, թէ երեքից որին կարելի է հաւատ ընծայել: Վերջապէս կարծես վճիռն ընդունուած է, նա կանչում է իւր մօտ ժորժին և շշնչում է ականջին:

— Ահա քեզ պահարանի բանալին, շաքար բեր, բայց տես կրկին փակիր և բանալին բեր տուր ինձ: Բայց միւս օրը նա այլ ևս հաւատ չէ ընծայում ժորժին և այնպիսի կասկածելի հայեացքով դիտում որդու իւրաքանչիւր քայլը, որ կարծես վախենում է՝ չը լինի թէ նա վառարանի վրայից որևէ բան թռցնէ: Նա կանչում է Ջարլին, տալիս բանալին և շշնչում է. «Աղախնին հետդ տար, նրան ասա՛, որ վերցնի սաւանը»: Հիւանդի քաշած բոլոր Ֆիզիքական տանջանքները՝ ոչինչ են, համեմատած այն սարսափելի բարոյական չարչարանքների հետ,

որ նա անկարող է այլ ևս կառավարել տնային գործերը: Պառաւն ակամայ յիշում է իւր որդոց ծուլութիւնը, ազահուլութիւնը, յիմարութիւնը և փող վատնելը: Նա արդէն վաղուց է, որ այլ ևս չէ յարգում իւր գաւակներին, որոնցից ոչ մէկը չիրականացրեց նորա յոյսերը և որոնք միշտ նրան տանջում էին իրենց շռայլութեամբ: Միայն մայրական սէրն է, որ ամեն ինչ ներում է: Նորա խղճալի և աղբրալի հայեացքը, կարծես խնդրում է նոցա, որ խնայեն իրեն և թողնեն հանգիստ մեռնել, չտեսնել, թէ ինչպէս նոքա կսկսեն միմեանց ձեռքից յափշտակել և բաժանել նորա գոյքը. այսպիսի բաժանումն, նրա աչքի առաջ, նրա մահամբձ ազահութեան համար անտանելի տանջանք կը լինէր: Բայց և այնպէս Ջարլը, ժորժը և Մորիսը շատ բարի և ուշադիր են դէպի իրենց մայրը: Նոքա միմեանց խօսք են տուել հերթով խնամել հիւանդին: Նոքա հոգատար են շատ մանրակրկիտ բաներում անգամ և բոլոր հոգսերն ապացոյց են իրենց միայն դէպի մօրը տաճած սիրոյ:

Բայց և այնպէս նոքա գալիս են հիւանդի սենեակը, անհոգ դէմքով, ծխախոտները բերանին, «ասէկօսէների» պաշարով. այդ բոլորը պառաւի ինքնասիրութիւնը չարաչար վերաւորում էր, մտածել տալով, որ նա ոչ մի արժէք չունի որդոց աչքում, մինչև անգամ իւր վերջին րոպէներում: Պառաւի ուժերը քանի ջլատում էին, այնքան նրա ան-

վատահուլթիւնը պարզ էր կացուցանում իւր և որդոց մէջ անհաճելի դրութիւնն: Եթէ մինչև անգամ նոքա չմտածէին յառաջիկայ ժառանգութեան մասին, նորա մինչև վերջին շունչը գոյքի պաշտպանելու ցանկութիւնը առիթ էր տալիս որդոց միշտ մտածել բաժանման մասին: Տիկինը հետևում է նոցա այնպիսի անվստահ ու կասկածելի աչքերով, որ նոքա ակամայ երես են դարձնում. նորան թւում է, թէ որդիքը անհամբեր սպասում են նրա շնչառութեան վերջին վայրկեանին: Եւ իրօք նոքա սկսում են մտածել այդ մասին, որովհետև պառաւն ինքն էր տեղիք տալիս այդ մասին իւր համր, աղերսական և մի տեսակ հարցական հայեացքով: Նա ինքն է դարգացնում նոցա մէջ ազատութեան սաղմը:

Երբ նա նկատում է, որ նոցանից մէկը տխուր է կամ միտք է անում, կանչում է իւր մօտ.

— Արի՛ այստեղ... ինչի՛ մասին ես մտածում:

— Հէնց այնպէս, ոչինչ, մայրիկ:

Բայց հիւանդի սուր հայեացքից չի վրիպում, որ որդին ցնցւում է այս հարցից և նա ասում է գլուխը շարժելով.

— Տղանք, իմ մասին շատ էք հոգս քաշում, բայց հանդիստ, միամիտ կացէք, շուտով ամեն ինչ կը վերջանայ:

Որդիքը չոքում են մօր առաջ երդւում, որ սիրում են նրան և հաւատացնում, որ կը փրկեն տկա-

րութիւնից. ինչ էլ որ լինի: Բայց հիւանդը յամառաբար կրկնում է և ասում. «ո՛չ, ո՛չ» և առաջուանից աւելի կասկածոտ է դառնում: Ինչ սարսափելի ճգնաժամ—կռիւ մահուան հետ, կռիւ, որ թունաւորուած է արծաթասիրութեան ու ժլատութեան ոգով:

Հիւանդութիւնը տևում է երեք շաբաթ: Արդէն հինգ բժշկական խորհուրդ է եղել, հրաւիրւում են բոլոր նշանաւոր բժիշկները: Աղախինն օգնում է ժիրարի որդոց հիւանդին ինամելիս. բայց չնայելով նոցա բոլոր ջանքերին՝ սենեակում արդէն նկատելի է անկարգութիւն: Առողջանալու ոչ մի յոյս չկայ և բժիշկը յայտնեց, որ ժամէ ժամ պէտք է սպասել մահուան:

Մի առաւօտ, նրա որդիքը կարծելով թէ հիւանդը քնած է, սկսում են խօսակցել պատուհանի մօտ, յառաջիկայ անսպասելի դժուարութեանց մասին: Այդ յուլիսի 15-ն էր, այն օրը, երբ նոցա մայրը սպասում է իր տնկեցներից սենեակների վարձը, որ սովորութիւն ունէր ինքն անձամբ կատարելու. այդ բանը որդոց մեծ դժուարութեանց մէջ է ձգում, որովհետև նոքա չը գիտեն ինչպէս անեն, որ ստանան այդ փողերը: Պաշտպանները արդէն սպասում են պատուէրներին:

Հասկանալի է, որ այդպիսի դրութեան մէջ, որի մէջ էր հիւանդը, չարժէր մինչև անգամ խօսել նորա հետ գործերի մասին, իսկ նորա մահից

յետոյ, այդ փողերը կը հարկաւորին անձնական ծախսերի համար:

— Լսեցէք, ինչ եմ ասում,— սկսում է Չարլը կիսաձայն: Եթէ ցանկանում էք, ես կը գնամ տրեկեցները մօտ... նոքա կը մտնեն մեր դրութիւնը և համոզուած եմ, որ չեն մերժիլ վճարելու տան վարձը:

Բայց ինչպէս երևում էր այդպիսի առաջարկութիւնը հաճելի չէր ժորժին և Մորիսին: Արդէն մի քանի ժամանակ է, որ նոքա սկսել են դէպի իրար կասկածանքով վերաբերուել:

— Մենք կարող էինք միասին գնալ— ասում է ժորժը. մեզ երեքիս էլ է փող հարկաւոր:

— Բայց չէ՞ որ ես ձեզ էլ կը տամ... Միթէ կասկածում էք, որ փողերը կառնեն, կը փախչեն:

— Ի հարկէ ոչ. բայց և այնպէս էլ լաւ կը լինի, որ միասին գնանք. բանը լաւ կը գնայ:

Եւ նոքա ձգում են միմեանց վրայ անվստահ հայեացքներ, որոնց մէջ բորբոքում է ապագայ բաժանման նախանձն ու ատելութիւնն: Փառանգութիւնը մօտ է և իւրաքանչիւրն աշխատում է ճանկել մեծ թիքան: Չարլն այն աստիճանի է ոգևորւում, որ մոռանալով նախազգուշութիւնը սկսում է բարձրաձայն խօսել, իբրև թէ պատասխանում է իւր եղբայրների գաղտնի մտքերին.

— Լսեցէք, լաւ կանենք, որ բոլոր ինչ վաճառենք. թէ որ այժմ վիճում ենք, ապա ուրեմն յետոյ իրար միս պիտի ուտենք:

Այդ ըրովէին ինչ որ մի տարօրինակ ձայն, որ ոչ խումփոց էր և ոչ հառաջ ստիպում է նոցա շուռ գալ. նոքա տեսնում են, որ իրանց մայրը, մեռելանման գունաթափ, բարձրացել է անկողնի վրայ և ամբողջ մարմնով ցնցուելով նայում է նոցա մօլոր հայեացքով: Նա բոլորը լսում էր և խանդաղատանդ կարկառում է իւր չորացած ձեռքերը, սարսափահար կրկնելով.

— Զաւակներս... զաւակներս:

Նա ընկնում է բարձի վրայ, ձգւում և մեռնում այն սարսափելի համոզմունքով, որ որդիքը ուզում են նրան կողոպտել:

Որդիքը սարսափից կարկամած ծունկ են չտքում նորա անկողնի առաջ, համբուրում են մեռածի ձեռքերը և հառաչելով փակում են նորա այքերը: Այդ ըրովէին նոքա լիշում են իրենց մանկութիւնը, նոցա զբաղեցնում է միայն մի միտք, այն է որ կորցրին մօրը: Եւ այս մահը, իբրև նախատինք, կը ծանրանայ նոցա խղճի վրայ: Աղախինը կարգի է բերում և հագցնում ննջեցեալին: Կանչում են միանձնուհուն ննջեցեալի վրայ սաղմոս կարդալու: Այդ ժամանակ որդիք ամբողջ օրերը անց են կացնում կառքի մէջ: Ո՛րքան հոգսեր ունին նոքա— հարկաւոր է պատրաստել յայտարարութիւններ, պատուիրել հրաւիրատուներ, թաղման հանդիսի համար կարգադրութիւններ անել:

Գիշերները նոքա դիակի մօտ հսկում են հեր-

Թով, միանձնուհու հետ: Ննջեցեալը պառկեցրած է իւր սենեակում: Վարազդուները ցած են թողած. հանգուցեալի խաչած ձեռքերում դրուած է արծաթեայ խաչ, գլխի կողմը վառվում է մոմ, ոտքերի մօտ մի աման սուրբ ջուր սրսկիչով: Լոյսը բացուելուն պէս վերջանում է և նոցա զիշերային հսկումն և միանձնուհին խնդրում է մի բաժակ տաք կաթ, որովհետև իրեն վատ է զգում:

Յուզարկաւորութիւնից մի ժամ առաջ դուռն ու սանդուղքը լի են ժողովրդով: Գուները ծածկուած են արծաթապատ սև մահուղով: Սենեակի խորքում, կարծես մատուռում, սարքած է դիասեղանը ծածկուած պսակներով և ծաղկէ փնջերով, իսկ նրա վրայ զետեղուած է դազաղը, որի շուրջը վառվում են մոմեր: Իւրաքանչիւր ներս եկող վերցնում է դազաղի ոտքերի մօտ դրած սուրբ ջրով ամանից սրբսկիչը և սրսկում դիակը:

Ժամը տասն և մէկին սկսում է յուզարկաւորութեան հանդէսը: Որդիքը գնում են դազաղի յետեւից, նրանց հետևում են քաղաքային պաշտօնեաներից մի քանիսը, մի քանի հոգի յայտնի կապիտալիստներից, արդիւնագործներից և բարձր բուրժուազիան. բոլորը գնում են դանդաղ քայլերով, աչքի տակով նայելով մայթերի վերայ կանգնած հանդիսատեսներին: Հանդիսի յետեւից գալիս են տասն և երկու կառք: Կառքերը մեծ տպաւորութիւն են թողնում ամբողջ թաղի բնակիչների վրայ:

Հանդիսականները ցաւում են Չարլի, Ժորժի և Մորիսին, որոնք կատարեալ սգազգեաց, գլուխները խոնարհեցրած, արցունքից ուռած ու կարմրած աչքերով հետևում են դազաղին. բոլորն այն կարծիքն են յայտնում, որ նոքա ոչինչ չեն խնայել և ըստ պատշաճին են թաղում իրանց մօրը:

Վերցրած են երրորդ կարգի դիակառք. թաղման ծախսը կը լինի մի քանի հազար ֆրանկ:

Մի ինչ որ ծերունի նոտար, խորամանկ ժպիտով նկատում է.

— Եթէ թաղման հանդէսն ինքը տիկին Փիրարը կատարէր, կը բաւականանար միայն վեց կառքով:

Եկեղեցու դուները պատած են սգոյ շորերով. ներսը նուագում է երգեհոնը, ծխատէր քահանան թողութիւն է սալիս մեղքերին: Ներկայ եղողները պտտում են դազաղի շուրջը և դուրս են գալիս եկեղեցուց, հրաժեշտ տալով մուտքի մօտ շարուած ննջեցեալի որդոց, որոնք համարեա ամբողջ տասն ըոպէ, շրթունքները կրկնով և արցունքները զրսպելով սեղմում են աջ ու ձախ իրենց մեկնած ձեռքերը, մինչև անգամ չնայելով թէ ո՞ւմ ձեռքն են սեղմում:

Երեքը միասին թեթեւացած ազատ շունչ են քաշում, երբ վերջապէս եկեղեցին դատարկուած է և յուզարկաւորութեան հանդէսը նորից առաջ է ընթանում, զիմելով դէպի գերեզմանատուն: Փիրարների

տոհմական գերեզմանատունը գտնուում էր Պէր-Լա-  
շէզ գերեզմանատանը:

Դագադին մի քանիսը ուղեկցում են ոտքով,  
մի քանիսը տեղաւորում են կառքերում: Տխուր  
հանդէսը կտրում է Բաստիլիայի հրապարակը և  
դիմում է դէպի Լարոկէտ փողոցը:

Անցորդները վերցնում են գլխարկները: Այս  
բազմամարդ թաղի բանուորները հետաքրքրութեամբ  
դիտում են հարուստ յուղարկաւորութիւնը, շարու-  
նակելով ուտել երկու կտոր հացի մէջ դրած եր-  
շիկը, որով նոքա սովորութիւն ունին առաւօտները  
նախաճաշելու:

Հասնելով գերեզմանատուն, հանդէսը մոռտքի  
մօտ ծռւում է ու կանգնում մի փոքրիկ գոթական  
ճաշակով շինուած մատուռի առաջ, որի դրան ճակա-  
տին սև տառերով փորուած է «Փիրարների գերդաս-  
տան», երկաթեայ դռները բոլորովին բաց են և  
ներսը երևում է մի ջահ վառած մոմերով: Մատու-  
ռին կից նոյն ճաշակով կանգնած են զանազան ար-  
ձաններ, կազմելով աջ ու ձախ ամբողջ փողոցներ,  
կարծես մի ահագին կահ-կարասիքի խանութ լինի  
համաչափ կարգով դարսած հէնց նոր պատրաստած,  
պահարաններով, արկղներով և կրողներով: Ներկայ  
եղողները գուարճանում են դիտելով շրջապատող յու-  
շարճանները կամ գով տեղեր են փնտռում մօտակաջ  
ճառուղիներում: Մի ինչ որ տիկին հիանում է գերեզ-

մանաքարերից մէկի վրայ փթթող վարդի թփով, որ  
ներկայացնում էր մի անուշաբույր փունջ:

Այդ միջոցին դագադը իջնում են դամբա-  
բանը: Քահանան կարդում է վերջին աղօթքները,  
մի քիչ հեռու սպասում են գերեզմանափորերը կա-  
պոյտ բլուզներով: Որդիքը հառաչում են աչք չհե-  
ռացնելով դամբարանից և մտածում, որ կը գալ  
ժամանակ, երբ իրենք էլ կը հանգչին այդ սառը  
հողում: Բարեկամները հեռացնում են նոցա շիրի-  
մից՝ երբ մօտենում են գերեզմանափորերը:

Երկու օրից յետոյ Չարլը, Փորժը և Մորիսը  
հաւաքուելով իրենց մօր հաւատարմատար ծեր նօ-  
տարի մօտ, կատաղաբար վիճում են և կռւում մի-  
մեանց հետ: Նոքա ինչպէս երդուեալ թշնամիներ,  
փրփրալից բերանով չարձակում են իրար վրայ:

Անպայման օգուտ է, որ նոքա սպասեն և  
չշտապեն բաժանել և ծախել գոյքը, բայց նոքա մի-  
մեանց լաւ են ճանաչում և թշնամաբար իրար ե-  
րեսով տալիս դառն ճշմարտութիւնները: Չարլը բո-  
լորը կը ծախսի իւր գիւտերի վրայ: Փորժը հէնց որ  
կոնծեց, ամեն ինչ կը վատնի կանանց վրայ: Իսկ  
Մորիսն էլ չի վարանի թէ իւր և թէ ուրիշի գոյ-  
քը վատնելը որ և է ձեռնարկութեան մէջ: Ծերունի  
նօտարը աշխատում է մի կերպ հաշտեցնել նոցա:

Նոքա կատաղաբար բաժանում են միմեանց  
դատի ենթարկելու սպառնալիքներով: Նոցանից ամեն  
մէկում կենդանանում է հանգուցեալը, իւր ամբողջ

ազահուլթեամբ, ժլատուլթեամբ և երկիւղով՝ չը լինի  
թէ կորցնի իւր կոպէկները: Եթէ մարդու վերջին  
ըոպէները թունաւորուած են արծաթասիրութեամբ,  
նորա մահը ծնում է չարիք և նորա դագաղի շուրջը  
եռում է թշնամութիւն:



1001  
1464



## II.

ասաւ ցուրտ յունվարը: Մորի-  
տները սաստիկ նեղ դրու-  
թեան մէջ են. ոչ գործ ու-  
նեն, ոչ հաց և ոչ էլ վա-  
ւարանը վառելու փայտ:  
Մորիսոն քարտաշ էր, իսկ  
կինը լուացարար: Նոքա  
ապրում են Բատինիոլում  
Կարդու փողոցի վրայ, ամբողջ թաղը վարակող  
կեղտոտ տանը: Նոքա պատսպարում են հինգե-  
րորդ յարկում, հէնց տանիքի տակը, որի առաստա-  
ղից ջուրը աղբիւրի նման թափում է դէպի ներս:  
Այդ բոլարը ոչինչ, եթէ նոցա չանհանգստացնէր իրենց  
10 տարեկան փոքրիկ որդին, որին պէտք էր կե-  
րակրել, պահել պահպանել: Երեխան մանկութիւնից  
թուլակազմ լինելով, յաճախ հիւանդանում է ամեն  
մի ջնջին պատճառից: Երբ նորան ուղարկում էին

ուսումնարան, նա այնպիսի եռանդով էր պարագլում, որ միշտ տկարանում էր: Սա մի խոհեմ և սիրելի տղայ էր: Երբ տանը պատահամբ երեխային կերակրելու հաց չէր լինում՝ ծնողները լաց էին լինում, խղճալով նրան: Նոքա երկիւղ են կրում երեխայի համար, որովհետև այդ հակառոջ տանը երեխաները ճանճերի նման են մեռնում:

Փողոցներում սառույց են կոտորում և հաւաքում: Մորիսոն մի կերպ աշխատանք է գտնում բրեն համար: Նա ամբողջ օրը աշխատում է սառցահատով և երեկոյեան տուն է բերում 40 սու: Սրանով կարելի է մի կերպ ապրել, մինչև շինութեանց վերանորոգութիւնների սկսիլը:

Մի երեկոյ Մորիսոն տուն վերադառնալով, Ջարլօին գտնում է անկողնում: Տղան հիւանդացել է, իսկ մայրը չի իմանում ինչն է ցաւում: Նա ուղարկեց Ջարլօին հին շոր ծախող իւր մօրաքրոջ մօտ, իմանալու, թէ չունի արդեօք երեխայի համար տաք շոր: Նա շատ է մրսում բամբակէ բլուզով: Բայց հակառակի պէս մօրաքրոյրը չունէր երեխային համար տաք շոր և խեղճ տղան վերադարձաւ այնպէս մրսած, որ ամբողջ մարմնով դողում էր ու կարծես հարբած լինէր: Այժմ էլ ամբողջ մարմնով այլուում է. զառանցման մէջ երգում է, խնդում և իբր թէ գնդակ է խաղում երեխաների հետ:

Մայրը պատուհանը ծածկեց հին թաշկինակով, որպէս զի կոտրած ապակուց քամի չփչի: Վերևի

երկու ապակիներից երևում էր մռայլ և գորշագոյն երկինքը: Աղքատութեան հոտ էր փչում ամեն անկիւնից. պահարանի արկղները դատարկ են, բոլոր սպիտակեղէնը գրաւ է գրուած: Ծախուած են մինչև անգամ սեղանն ու աթոռները:

Երբ Ջարլօն առողջ էր լինում, պառկում էր յատակի վրայ, իսկ այժմ նորան պառկեցրին անկողին: Բայց անկողնումն էլ այնքան յարմար չէր պառկել, որովհետև միջի բուրդը գրուանքաներով վաճառում էին հին շորեր առնողին, գրուանքան չօրս կամ հինգ սուով: Երբ Ջարլօն հիւանդացաւ, Մորիսոները սկսան պառկել խոտի վտիտ մահճի վրայ որդու փոխարէն, որի վերայ շունն անգամ լայնի չէր անի քնելու:

Նոքա պառկած են և նայելով անկողնում շուռու մուռ եկող որդուն՝ չեն հասկանում, թէ ինչ է պատահել նորան: Աստուած ոչ անի, չը լինի թէ թունաւոր կենդանի կծած լինի, կամ թէ մէկը խրամիչքով թունաւորել: Նոցա սենեակն է մտնում հարեան պառաւ Բոննէն և նայելով հիւանդին ասում, որ նա տենդ ունի: Պառաւը գիտէ այդ հիւանդութիւնը, այդ իսկ հիւանդութիւնից մեռաւ և իւր մարդը:

Մայրը լսելով այս տխուր լուրը՝ գրկում է երեխային և արտասում, իսկ հայրը գլուխը կորցրած վազում է բժշկի մօտ: Մի քիչ ժամանակից չետոյ նա վերադառնում է մի բարձրահասակ և յարգելի

45

պարտնի հետ: Նա լուռ ու մունջ ~~թխթխկոտում է~~  
և լուռ հիւանդին:

Տիկին Բոննէն վագում է իւր տանից մատիտ  
և թուղթ բերում բժշկին դեղատոմսի համար: Վեր-  
ջապէս բժիշկը առաջուայ պէս լուռ ու մունջ պատ-  
րաստում է դուրս գնալ:

— Ի՞նչն է ցաւում, պարոն, հարցնում է մայրն  
ընդհատուող և կերկերուն ձայնով:

— Թոքախտ — պատասխանում է բժիշկը ա-  
ռանց երկարացնելու. չետոյ ինքն է հարցնում:

— Դուք դիմել էք բարեգործական ընկերու-  
թեան:

— Այ, պարոն, մենք միշտ լաւ էինք ապրում,  
միայն ներկայ ձմեռը մեզ այս օրը ձգեց:

— Յաւալի է, շատ ցաւալի — մըթմըթում է  
բժիշկը խոստանալով դարձեալ այցելել:

Տիկին Բոննէն դեղի համար փող է տալիս 20  
սու: Իւր 40 սուով Մորիսոն առնում է երկու ֆունտ  
միս, քիչ ածուխ և մոմ և այս առաջին զիշերն  
անցնում է շատ լաւ: Սենեակում վառւում է վա-  
ռարանը և հիւանդը տաքանալով կարծես քնում է.  
գոնէ դառանցանքը դադարում է:

Նա անշարժ պառկած է. թէև երեխայի ձեռ-  
քերը կրակի պէս այրւում են, այնուամենայնիւ  
ճնողները հանգստանում են, տեսնելով, որ նա քնեց:

Քայց միւս առաւօտ, երբ բժիշկը լուռ և անբա-  
ւական դէմքով, գլուխը օրօրելով դիտում է, ճնողնե-

րին աւելի անհանգստութիւն ու երկիւղ է տիրում:

Հինգ օր շարունակ հիւանդի դրութիւնը ան-  
փոփոխ մնաց: Զարլօն նիրհում է ամբողջ օրերով.  
Նիւթական կարիքը աւելի և աւելի է ներս թափան-  
ցում սենեակը պատուհանի ճեղքերից ներս փչող  
քամու նման: Երկրորդ օրն և եթ տիկին Մորիսոն  
ծախեց վերջին շապիկը, երրորդ օրը դարձեալ հանեց  
հիւանդի անկողնից մի քանի ֆունտ բուրդ, դեղա-  
տան պարտքը վճարելու համար:

Այժմ վաճառելու այլ ևս ոչինչ չէր մնացել:

Մորիսոն շարունակում է իւր աշխատանքին  
գնալ և առաջուայ նման սառույց է կոտրտում,  
բայց այժմ նորա աշխատածը չէ բաւականացնում:  
Այս սարսափելի սառնամանիքը կարող է սպանել  
Զարլօնի և Մորիսոն աղաչում է Աստծուն, որ շու-  
տով տաք օրեր անի, իսկ միևնոյն ժամանակ սար-  
սափով մտածում է, թէ ինչ պէտք է անի, երբ տաք  
օրերն ընկնեն և նա զրկուի իւր միակ աշխատանքի  
աղբիւրից:

Առաւօտները աշխատանքի գնալիս, նա ուրա-  
խանում է տեսնելով ցրտից սպիտակած փողոցները,  
բայց մտաբերելով մեռնող որդուն ջերմաջերմ աղօթք  
է անում, որ Աստուած շուտ ուղարկէ ջերմութիւն  
և պայծառ արև, որոնք գուցէ ազատեն իւր որդուն  
մահուան ճիրաններից: Ո՛հ, ինչո՞ւ նոքա առաջուց  
չմտածեցին բարեգործական ընկերութեան մասին.  
նոքա պէտք է անպատճառ գրուած լինէին և այժմ

կունենային՝ գուցէ ձրի բժիշկ և անհրաժեշտ դե-  
ղորայք:

Այդ օրերը կինը գնացել էր բարեգործական  
ընկերութեան գրասենեակը. այնտեղ նրան պատաս-  
խան տուին, թէ այնքան խնդիրներ են հաւաքուել,  
որ պէտք է մի փոքր սպասել: Ելի լաւ էր, որ նը-  
րան ձեռնունայն չէին արձակել: Մի ինչ որ բարե-  
գործ տիկին նուիրել էր նրան հինգ Փրանկ, բայց  
երբ այդ փողերն էլ վերջացան, դարձեալ ընկան  
անելանելի դրութեան մէջ:

Հինգերորդ օրը Մորիսոն բերեց իւր վաստակած  
վերջին 40 սուն: Տաք եղանակներն սկսան և նրան  
արձակեցին գործից: Ծայրայեղ դրութեան մէջ հն:  
Փայտ չկայ վարելու, հաց չկայ ուտելու, փող չկայ  
դեղեր գնելու: Սենեակն այն ատտիճան խոնաւ է,  
որ պատերից ջուր է կաթում: Ծնողները նստան  
իրենց երեխայի մօտ, ցրտից ատամները կափկափե-  
լով, ականջ են դնում հիւանդի խռնոցին ու ծանր  
շնչառութեան:

Տիկին Բոննէն այլ ևս չի գալիս նոցա տուն,  
այս տխուր պատկերը խիտ ազդում է նորա ջղե-  
րին: Տնկեցներն աշխատում են շտապով անցնել  
դրան մօտով: Երբեմն դժբաղդութիւնը յաղթում է  
անբաղդ մօրը. նա արտասուելով սկսում է քնքշա-  
բար համբուրել և փայտալի իւր մանկան, կարծելով,  
որ դրանով կարող է օգնել: Սրտաբեկ հայրը, պա-  
տուհանից կախած թաշկինակի ծայրը լետ քաշելով՝

ամբողջ ժամերով կանգնած մռայլ նայում է սևա-  
ցած փողոցներին, տանիքից թափւող ջրերին և  
ամենուրեք վազող առուակներին: Այժմ երանի՛ թէ  
առողջանար Ջարլօն...

Մի առաւօտ բժիշկը յայտնում է, որ այլ ևս  
չի այցելի, որովհետև առողջանալու ոչ մի յոյս չկայ:

— Այս անիճեալ խոնառութիւնիցն է բոլորը,  
ասում է բժիշկը:

Մինչ այս մինչ այն, Մորիսոն կրկին գնում է  
բարեգործական ընկերութեան գրասենեակը օգնու-  
թիւն խնդրելու: Նորան խոստանում են, և ահա խեղ-  
ճերը սպասում են և սպասում: Տէր Ատուանձ, ինչ  
սարսափելի օր է: Սենեակը ցուրտ և մութ, մի ան-  
կիւնում անձրևը հեղեղի նման է կաթում, այնպէս  
որ հարկ եղաւ անկիւնում դռը դնելու: Ամբողջ օրը  
ոչինչ չէին կերել, երեխան էլ երէկ խմել էր գոնա-  
պանի բերած մի բաժակ զարէ ապուր: Մորիսոն  
անշարժ նստած է սեղանի մօտ, գլուխը ձեռքերն  
առած. նորա գլուխը պտոյտ է գալիս, ականջները  
խշխշում...

Նորա կինը դրան ամէն մի շփլթօցին վեր է  
թռչում. նա շարունակ խոստացած օգնութեան յոյ-  
սով էր ապրում: Ժամը վեցն է, բայց ոչ ոք չէ գա-  
լիս. սենեակում կամաց կամաց տիրում է մութը:  
Յանկարճ տիրող խաւարի մէջ լսվում է Ջարլօի ձայնը.

— Մայրի՛կ... մայրի՛կ...

Մայրը վազում է գէպի նա և լսում է բարձր

խապոտ շնչառութիւն. բայց ահա ձայնը կարկա-  
մուն է: Մթութեան մէջ նրան թւում է, թէ երե-  
խան պառկած է գլուխը տարօրինակ յետ գցած.  
նա խելագարի պէս սկսում է ճշալ.

— Արագ, շուտով ճրագ. Չարլօ ինչ պատահեց  
քեզ, պատասխանիր, մի բան ասա գոնէ:

Արագ չկայ. վերցնում է լուցկին, ուզում է  
վառել, բայց չէ կարողանում. ձեռքերը դողդողում  
են ու լուցկիները կոտրտում: Նա այն ժամանակ  
դողդոջուն ձեռքերով շոշափում է երեխայի գլուխը և  
բարձրաձայն հեկեկում.

— Տէր Աստուած, նա մեռաւ. Մորիսո, նա մեռաւ:  
Հայրը կարծես խոր քնից զարթնելով, բարձրա-  
ցնում է գլուխը և ոչինչ չնշմարելով մթութեան  
մէջ, ասում է.

— Մեռաւ... դէհ ինչ անենք... գուցէ հէնց  
լաւն էլ այդ է:

Մայրն սկսում է բարձր ձայնով հեկեկալ. նրա  
հեկեկոցի վրայ գալիս է տիկին Բոննէն ճրագը ձե-  
ռին: Կանայք սկսում են անկողինը կարգի բերել և  
փաթաթել շորերում Չարլօին: Այդ միջոցին բաղ-  
խում են դուռը, հասնում է խոստացած օգնութիւնը.  
բարեգործական ընկերութիւնից նրանց ուղարկել են  
10 ֆրանկ:

Մորիսոն դառնապէս ծիծաղում է. բարեգոր-  
ծական ընկերութիւնը միշտ այսպէս ժամանակին է  
հասցնում իւր օգնութիւնը:

խղճալի, փետուրի նման թեթև, նիհար, փոք-  
րիկ դիակը դրուած է ահագին մահճակալի վրայ,  
որպէս սառած ճնճղուկ:

Տիկին Բոննէն սկսում է առաջուայ նման օգ-  
նել տնային գործերում: Իզուր տեղը քաղցից չպէտք է  
հօ մեռնել, միւլենոյնն է Չարլօն էլ յարութիւն չի  
առնի, և նա առաջարկում է իւր ծառայութիւնը՝  
հաց, միս ու մոմ գնելու համար: Մորիսոները հա-  
մաձայնում են: Տիկին Բոննէն վերագառնում է  
գնած իրերով. նոցա առաջն է դնում տաք տաք  
երշիկներ: Մորիսոները ազահաբար վրայ են պրըծ-  
նում և յագեցնում իրենց քաղցը, հէնց այստեղ որ-  
դու դեռ չսառած դիակի մօտ, որի գունաթափ  
դէմքը, մթութեան մէջ նշմարւում է, իբրև մի  
սպիտակ բիծ: Վառարանը վառված է. Մորիսոները  
կշտացան, տաքացան և զուարթացան: Երբեմն մօր  
աչքերից արցունքի խոշոր կաթիլներ են գլորւում:

— Ո՛հ, Չարլօն ինչպէս կրտաքանար և ինչպէս  
կուտէր այս տաք-տաք երշիկները...

Տիկին Բոննէն մնում է ննջեցեալի մօտ և գի-  
շերուայ ժամը մէկին, երբ Մորիսոն վերջապէս քը-  
նում է, գլուխը յենելով մահճակալի ոտներին, կա-  
նայք սկսում են իրանց համար սուրճ պատրաստել:  
Նոքա հրաւիրում են մանկահասակ դերձակուհուն,  
որն այդ ընդունելութեան փոխարէն իւր հետ վեր-  
ցնում է մի շիշ օղի. երեքն էլ մեծ բաւականու-  
թեամբ սկսում են սուրճ խմել, կիսաձայն խօսակ-

ցելով իրար հետ և հաղորդելով միմեանց իրենց լայտնի մահուան դէպքերը: Մահուան մասին խօսելիս նոքա փոքր առ փոքր սկսում են բամբասել հարևան բնակիչներին և մօտերքս Նոյէ փողոցում տեղի ունեցած եղեռնագործութեան մասին. նոցա ձայները կամաց կամաց բարձրանում են և մինչև լոյս՝ ուրախ զուարթ շատախօսելով, նոքա մոռանում են փոքրիկ ննջեցեալին:

Միայն Չարլօի մայրը երբեմնակի վեր է կենում տեղից, մօտենում է մահճակալին, կարծես համոզուելու՝ չիրաւի իւր Չարլօն մեռել է:

Մորիսոնները ժամանակին չհաղորդեցին որդու մահը, ուստի միւս օրը չէր կարելի թաղել. ճարահատեալ ամբողջ օրը պէտք է պահել տանը, իսկ որովհետև մի սենեակից աւելի չունէին, կամայականայ պէտք է ուտէին և քնէին այնտեղ՝ ուր դրուած էր իրենց մեռած զաւակը:

Գործով զբաղուած ժամանակ, ծնողները երբեմն բոլորովին մոռանում էին որդու մահը, բայց ամէն անգամ, երբ լիշում էին, թէ երեսան մեռած է, նոքա շատ տխրում էին, կարծես կրկին անդամ են կորցնում նրան:

Վերջապէս միւս առաւօտ բերում են փոքրիկ, կոպիտ և անտաշ արկղի նման, մի դազադ: Մորիսոյի ներկայացրած չքաւորութեան վկայականով, բարեգործական ընկերութեան վարչութիւնը դազադը ձրի էր ուղարկել:

Իէհ, բարի ճանապարհ. դազադի յետեից գրնում են ծնողները, ճանապարհին պատահած մի քանի բարեկամներ, տիկին Բոննէն և մանկահասակ դերձակուհին:

Մինչև ծնկները ցելում, համարեա վազէվազ են դիմում դէպի եկեղեցի:

Մի սարսափելի մառախլապատ և խոնաւ օր էր. պատարագը մի քանի ըոպէնում վերջացաւ, և յուղարկաւորները դարձեալ ցելս կոխ տալով, դիմում են դէպի գերեզմանատուն:

Գերեզմանատունը գտնում է քաղաքից շատ հեռու, զօրանոցների յետևը:

Անցնում են ամբողջ Սենտիէն փողոցն և քաղաքի սահմանագլիծը: Վերջապէս երևում է գերեզմանատունը, որ մի ահագին մռայլ անապատ է, չրջապատուած մամուռ պատերով, որոնց վրայ տեղ տեղ ձգուած են չորացած ծառեր. սոցա մերկ ճիւղերը զգալի կերպով աչքի են ընկնում մառախլապատ երկնակամարի մթին Փօնի վրայ:

Յուղարկաւորները, ցելս կոխ տալով, յառաջ են գնում: Մինչ նոքա կանգնած սպասում են քահանային, սկսում է անձրև տեղալ, որ շուտով փոխւում է կատարեալ հեղեղի:


Վերջապէս քահանան գուրս է գալիս մատուռից և Չարլօին թաղում են ընդհանուր գերեզմանում: Ամբողջ գերեզմանատանը ցրուած են քամուց խորտակուած խաչեր, և ցելսի մէջ կիսափուտ պսակ-

ներ: Գա թշուառականներով բնակեցրած, մի տար-  
տամ, մռայլ տեղ է, թշուառականները՝ որոնք կո-  
տորուել են ցրտից ու քաղցից:

Ամէն ինչ վերջացած է: Ներկայ եղողներից իւ-  
րաքանչիւրը մի բուռը հող է ածում Ջարլօի դագա-  
ղի վրայ. բոլորեքեան ցրում են: Հեռանում են և  
ծնողները, չտալով մինչև անգամ իրենց վերջին  
հրաժեշտը օրդուն, որովհետև ցեխը մինչև ծնկներն  
էր հասել և նոքա չէին կարող ծունկ չոգել նորա  
գերեզմանի առաջ:

Գերեզմանատնից դուրս գալիս, սաստիկ անձրև  
էր տեղում: Մորիսոն էլ ունենալով Յ Ֆրանկ, հրա-  
ւիրում է իւր բարեկամներին և հարևաններին մըտ-  
նել մօտիկ գինետուն մի բան ուտելու և խմելու:

Սեզանն են նստում: Խմում են երկու լիտր օղի,  
ուտում են պանիր ու հաց, Մորիսոյի բարեկամներն  
էլ իրենց կողմից պահանջում են դարձեալ երկու  
լիտր օղի և երբ վերագառնում են Փարիզ, բոլորե-  
քեան ուրախ և գոհ տրամադրութեան տակ են...



1993

2013

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Եժ—Լուսադէմին, վէպ . . . . .	1 ր. —
2. „ Ուսկոկներ, վէպ . . . . .	— 35 կ.
3. Ժիվոտովսկի—Տարուժիւն եւ օղ՝ պատկ. (սակաւաթ.)	— 12 կ.
4. Էլիզա Օրժնչիօ—Գիւղական փաստարանը (սակաւ.)	— 20 կ.
5. Բերնշտէյն—Ժաղիկ եւ պտուղ, պատկերներով . . .	— 8 կ.
6. Ժիվոտովսկի—Անձրև եւ ձիւն, պատկերներով . . .	— 10 կ.
7. Էլիզա Օրժնչիօ—Կախարդը . . . . .	— 15 կ.
8. Ս. Բ.—Բոյսերի կեանքը, պատկերներով . . . . .	— 8 կ.
9. Բժ. Բուզուղեան—Առողջապահական գրոյցներ . . .	— 5 կ.
10. Կարմէն Սիլվա—Մայրական սէր . . . . .	— 2 կ.
11. Էմիլ Զօլա—Երկու մահ, 1899 . . . . .	— 5 կ.

ՄԱՐՈՒՔԻ ՏԱԿ Է՝

Վազով—Լծի տակ, վէպ բոլորական կեանքից, 2 նստար.

Գիմե՛՛՛ Թիֆլիս Կենդրոնական գրախմբարանից:

Գ ի ն ը Ծ կ ո ս Վ .

